15901

891.99
Ч-45

1406

I

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Բ. ՔԱՄԱԼԵԱՆԻ

# ԵՐԵՔ ՔԱՋԵՐ

ԿՈՄԵԴԻԱ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

† Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆԻ

2003

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԷԼԵԱՆ ՓՈՂՈՑ, Տ. 1[illegible]2
1885

# ԵՐԵՔ ՔԱՋԵՐ

I

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Բ. ՔԱՄԱԼԵԱՆԻ

# ԵՐԵՔ ՔԱՋԵՐ

ԿՈՄԵԴԻԱ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

† Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, Տ. 1|2
1885

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Сентября 1885 г.
Типографія И. Мартиросіанца, Орбел., ул., д. 1/2.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս վօդևիլը հանուած է հանգուցեալ «Մկրտիչ Պէշիկթաշլեանի մատենագրութիւնից» և փոխադրուած է ներկայ գրականական լեզուով, որովհետև Պէշիկթաշլեանի մատենագրութիւնը տպուած է Պօլսոյ բարբառով, և միևնոյն ժամանակ սպառուած լինելով այդ մատենագրութեան օրինակները, ուստի լաւ համարեցինք եթէ ոչ բոլորը գոնէ այս վօդևիլը ևս լոյս ընծայել նորից։ Նոյնպէս մտադիր ենք, եթէ յաջողուեց մեր մտադրութիւնը և չը հանդիպեցանք զանազան խոչնդոտների, կամաց կամաց լոյս ընծայել մի քանի վօդևիլներ ևս. որոնք դեռ չեն տպագրուած։

Մեծապատիւ ընթերցողներ, դուք չը կարծէք որ այս բոլորը մեր շահերի համար ենք անում, կամ չասէք թէ մենք սորա մէջ աշխատում ենք մեզ օգուտ տալ դրամական կողմից. քաւ լիցի։ Ով որ փորձուած է, նա կը հասկանայ թէ որքան դժուար է գիրք տպագրելը. մենք մեր բաւականութիւնը ստանում ենք միայն նրանով, որ աշխատենք ծախսը ծածկելու, միւս կողմից մեր հանգուցեալ հեղինակների պատիւը վերանորոգելու, նոցա չը մոռանալու, նոցա և աշխատութիւնները 'ի կորուստ չը մատնելու։ Ամէն մի անհատ պարտական է իւր ազգին ծառայելու ըստ կարողութեան, մեր կարողութիւնն էլ այսքան էր, իսկ որքան կաւելանայ մեր ոյժը, մենք չենք խնայի ազգի համար աշխատելու։ Շատերը ոյժ ունեն, բայց չը գիտեն գործածել, իսկ մեր մէջ կայ ցանկութիւն և նպատակ, բայց չը կայ ոյժ։ Այստեղ պարտաւոր եմ իմ խորին շնորհակալութիւնս յայտնել, նախ՝ իմ բարեկամ մեծապատիւ պարոն Մեհրաբ Աւագեան Մելիք-Մեհրաբեանին, պայծառափայլ իշխաններին — և այն մեծապատիւ անձինքներին, որոնք մեզ օգնեցին փոքր 'ի շատէ երանգլումայով։ Պատրաստ է նաև երկրորդ թատրոնական գրքոյկը։

Բ. Քամաչեան

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՌՕՄՈՒԼՏՈՍ, *տանուտէր*

ԼՕՐԷՏՈՍ, *սորա եղբայրը*

ԹԱԴՈՍ, *սոցա ծառայ*

ԹԱԴԷՈՍ ԿՈՏՐԱՏԻՈՍ

ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ ՇԱՆԱԽՈՐՈՎ } *քաջեր*

ՊԵՏՐՈՍ ԱՄԵՆԱԿՈՒԼՈՍ

*Պաւաւ կլին, խոհարար*

---

# ԵՐԵՔ ՔԱՋԵՐ

ԿՈՄԵԴԻԱ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ, ՀԵՂ. † Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ

*Տեսարանը ներկայացնում է մի հասարակ սենեակ։*

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՌՕՄՈՒԼՏՈՍ, ԼՕՐԷՏՈՍ

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Խե՜ղճ Կերարտոս, որչափ ցաւում եմ նորա վերայ. աշխարհս միշտ այսպէս է, լաւ մարդը երկար չի ապրում։

ԼՕՐԷՏՈՍ

Եղբա՛յր, քանի լաց լինես, քանի հառաչես, համբերութիւնս հատեցրեր, չը գիտեմ ամենից սիրելի ազգականդ էլ որ եղել էր, մինչեւ այդքան պիտի ցաւէիր։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ի զուր ես խօսում, ես իմ արածս գիտեմ, ասա խնդրեմ, որտեղ ես տեսել դու Կերարտոսի պէս քաջ ու հաւատարիմ ծառայ։

ԼՕՐԷՏՈՍ

Այո, ես էլ շատ եմ ցաւում նորա մահուան վերայ, բայց...

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Չե՞ս յիշում, իւր կեանքումը քանի անգամ իմ կեանքը ազատեց վտանգից, մի՞թէ դու էլ պարտական չես նրա համար քո կեանքը, երբ անտառի մէջ վեց աւազակներ քեզ վերայ յարձակուեցան, ու Կերարտոսը այդ անզգամներին երկուսին գետինը փռեց, իսկ միւսներին էլ փախցրեց։

ԼՕՐԷՏՈՍ

Եւ ես էլ ապերախտ չը գտնուեցայ ու շատ ընծաներով վարձատրեցի իւր քաջութիւնը, բայց հիմայ որ մեռած է, էլ իգուր չէ՞ նրա վերայ երկար ու բարակ ողբ անելը, աշխատենք մէկ ուրիշը գտնել նրա տեղ։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ուղիղն եմ ասում, որ այդ է ինձ տանջում, որ շատ դժուար է այս ժամանակ նորա պէս կտրիճ և հաւատարիմ ծառայ ճարելը։

ԼՕՐԷՏՈՍ

Ի՞նչ... տանջո՞ւմ...

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Այո

ԼՕՐԷՏՈՍ

Գիտացի՞ր, ինչպէս որ խեղճ Կերարտոսի մահուան լուրը տարածուեցաւ, այս առաւօտը երեք հոգի ներկայացան ինձ և խնդրեցին որ հանգուցելոյն պատիւը ունենան։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Բայց գիտե՞ս, որ հիմիկուան ծառաները ոմանք մեծ մեծ խօսող, ոմանք խոշոր խոշոր ջարդող, և սրտով էլ անպիտան ու վատ մարդիկ են։



ԼՕՐԷՏՈՍ

Բայց կարող ենք նրանց միջից մէկին հաւանել։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Շատ լաւ, ուզածդ լինի, ո՞ւմը պէտք է գտնես տեսնեմ, որ Կերարտոսի տեղը կարողանայ բռնել։

ԼՕՐԷՏՈՍ

Այս առաւօտ եկողներից կարող ենք մէկն ու մէկին ընտրել։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Դու նոցա ճանաչո՞ւմ ես։

ԼՕՐԷՏՈՍ

Ուղիղն ասած չեմ ճանաչում, բայց նոքա ինձ ասացին, որ իրենք անվախ և զօրաւոր մարդիկ են։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Որովհետև միտքդ դրել ես, որ այն երեքից մէկին ընտրես, և քաջ մարդիկ են, ես էլ կուզեմ նոցա գլուխը մէկ խաղ խաղալ փորձելու համար։

ԼՕՐԷՏՈՍ

Փորձէ ինչպէս որ կուզես։ (Ներս է մտնում Թադոս):

## ՏԵՍԻԼ Բ

ՆՈՅՆՔ, ԹԱԴՈՍ

ԹԱԴՈՍ

Տէարք իմ, մէկ մարդ եկել է Շանախորով անունով, ուզում է ձեզ տեսնել։

ԼՕՐԷՏՕՍ

Նոցանից մէկն է:

ՌՕՄՈՒԼՏՈՍ (Ծառային)

Թող գայ: (Ծառան դուրս է գնում:)

ԼՕՐԷՏՕՍ

Այս անելու փորձը ինչ է, կարող եմ գիտենալ:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Պէտք է ասեմ քեզ, որ փորձենք տեսնենք սոցանից սպիտակ երեսանի կարող է դուրս գալ, որ տեսնենք թէ, իրաւ քաջ մարդիկ են թէ ոչ: (Ներս է մտնում Շանախորով:)

ԼՕՐԷՏՕՍ

Ահաւասիկ ինքը, տես ինչ ահաւոր կերպարանք է:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Տեսնում եմ, գլխից մինչև ոտը սպառազինուած է, բայց քաջութիւնը երևոյթից չէ կախուած:

## ՏԵՍԻԼ Գ

ՆՈՅՆՔ, ՇԱՆԱԽՈՐՈՎ

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Յարգոմեծար տեարք, ձեր հրամանով կուգէի խընդրել... ձեզանից... (հապաղելով:)

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Խօսէ՛, խօսէ՛:

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Լսելով ձեր ծառայի մահը... և հիմայ եսէլ գործ չունե-



նալով, կը յուսամ... ուստի կաղաչեմ ձեր յարգոմեծար տէրութեանը:

ԼՕՐԷՏՕՍ

Կուզես մեզ մօտ ծառայ լինել:

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Այո՛, այո՛, այդ էի ուզում ասել:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Քո անունդ ինչ է:

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Բարդուղիմէոս մարդակերոս, անուանեալն Շանախորով, բայց կարող եմ նաև, եթէ հրամայելու լինէք, խորովել, այրել, տապակել բովանդակ աշխարհը:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ո՜հ, ո՜հ, շատ բարձրից սկսեցիր:

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Ներեցէ՛ք, կուզէի ասել որ իմ քաջութիւնս...

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Մտիկ արա մինչև մեր ծառայութեան մէջ ընդունենք քեզ, ի հարկէ եթէ պայմանները հարմարուեն, առայժմ պէտք է որ այս գիշեր մէկ մեռելին պահես:

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Մէկ մեռե՞լ, հա՜, հա՜, հա՜, ինչ էք ուզում ասել, դուք կարծում էք այնքան ույժ չունեմ կենդանիներ սպանելու, որ ուզում էք մեռելներին պահապան անել ինձ:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Հանդարտուի՛ր, ո՛վ քաջ, գիտես որ անցեալ գիշերը

մեր խեղճ սպասաւորը մեռաւ, որն որ իւր կատակներով սի-րելի էր ինձ, ուրեմն որոշեցի որ վաղը մի պատուաւոր յու-ղարկաւորութիւն լինի նորան, բայց ինչպէս էլ որ մեր երկրում սովորութիւն է, դեռ չը թաղուած մեռելի մօտ մի պահապան պէտք է կենայ: Ուստի դու պէտք է լինես այդ պահապանը. կարո՞ղ ես յանձն առնել այդ պաշտօնը:

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Յանուն բոլոր դժոխային կաճառի, կենդանի մարդ-կանց ամենից զօրաւորագոյնին կարող եմ պահապան լի-նել, ուր մնաց մի մեռել:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Շատ լաւ, այն ժամանակ ես էլ կը վկայեմ քո գոր-ծունէութիւնը. արեւը որ մայր կը մտնի մի քիչ կերակուր կը վերցնես հետդ, և գործդ կը սկսես:

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Բայց ուզում եմ մէկ իմանալ, ո՞ւր է այդ մեռելը:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Քիչ ժամանակից յետոյ այստեղ պէտք է բերել տամ: (Կանչում է) Թադոս: (Ներս է մտնում Թադոսը:)

ԹԱԴՈՍ

Համմէ՞:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Տար այս մարդուն խոհանոցը, ասա՛ խոհարար պառա-ւին, որ քիչ կերակուր տան իրան (Շանախորովին:) Այնտեղ կաց մինչեւ որ կանչեմ քեզ, հարկաւոր չէ ասել քեզ, որ մեռել պահելու համար զէնք հարկաւոր չէ:

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Ի՞նչ... Շանախորովը մի՞թէ զինուց կարօտ է, թող



դիմացս գայ ով որ կուզէ, մարդ լինի, անասուն, Սաթայէլ, հոգ չեմ անի, մատներովս կը խեղդեմ նոցա, գիտեցած եղէք: (Ծառային:) Երթանք ուրեմն:

ԹԱԴՈՍ

Ո՛հ, ի՜նչ սոսկալի մարդ, եթէ որ իրաւ են ասած-ները:

ԼՕՐԷՏՈՍ

Ի՞նչ այլանդակ մտածմունքներ են քո մտածմունք-ները, տեսնենք ծայրը ուր պիտի գնայ:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Չը գիտե՞ս ռամիկ մարդու մէջ աւելորդապաշտու-թիւնը որչափ զօրացած է, նոյն իսկ անվախ սրտով մարդիկներն էլ մեռելներից, կախարդներից, և ուրուական-ներից կը վախենան: (Ներս է մտնում Թադոսը:)

ԹԱԴՈՍ

Տեարք իմ, այս իրիկուն չը տեսնուած անտանելի դէմքերու գիշեր է. ահագին երկայնութեամբ մի մարդ եկաւ տնկուեցաւ պուպուզ, բեխերն ու կերպարանքը այն-պէս սոսկալի են, որ...

ԼՕՐԷՏՈՍ

Երեքից մէկն էլ նա է: —

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ասա՛ որ գայ, լաւ ժամանակ եկաւ: (Գնում է ծառան:)

ԼՕՐԷՏՈՍ

Քիչ ժամանակից յետոյ երրորդն էլ կը գայ:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Իմ ուզածս էլ դա է, փորձս աւելի լաւ պիտի յա-ջողուի:

ԼՕՐԷՏՈՍ

Գիտեմ որ անշուշտ կը գայ, մեր տան մէջ ծառայ լինելու պաշտօնը բաւական ախորժակ շարժելու է մեր պառաւը:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Շատ լրաւ է ասածդ:

ԼՕՐԷՏՈՍ

Բայց դեռ ինձ բան չասացիր թէ ինչ հնարքով պիտի փորձես դոցա քաջութիւնը:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Քիչ էլ համբերէ և բոլորը կիմանաս, դուն էլ պէտք է համոզուես, թէ որչափ վտանգաւոր են այդ ինքնակոչ քաջերը:

ԼՕՐԷՏՈՍ

Լաւ, ուզածդ արա, իսկ ես գնամ պատրաստեմ սրահը այս երեկուն հիւրերին ընդունելու համար:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Այո, այդ հիւրերը յարմար ժամանակ պէտք է գան, մի զուարճալի տեսարանի ներկայ գտնուելու, բայց ահա խրտուիլակը: (Լօրէտոսը դուրս է գնում:)

## ՏԵՍԻԼ Գ

ՌՕՄՈՒԼՏՈՍ, ԿՈՍՏՐԱՏԻՈՍ

ԿՈՍՏՐԱՏԻՈՍ

Մեծարգոյ տէր, կարո՞ղ եմ արդեօք ձեր տան մէջ ծառայութեան պատիւ ունենալ:



ՌՕՄՈՒԼՏՈՍ

Որո՞նք են քո արժէքդ և պարծանքներդ:

ԿՈՍՏՐԱՏԻՈՍ

Ամեն բան կարող եմ, ինչ ասել է վախ, չը գիտեմ. անիւի պէս արագաշարժ են ոտներս. ([illegible] մէկ ոտի վերայ) իսկ ձեռքերիս ոյժը, խօսք չը կայ:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Կարո՞ղ ես մեռել ձևանալ:

ԿՈՍՏՐԱՏԻՈՍ

Մեռե՞լ հա՜, հա՜, հա՜, մեռել ձևանա՞լ, ի՞նչ էք ուզում ասել:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Գիտեցած լինես, որ մի քիչ առաջ մէկն էլ եկաւ խնդրելու, որ նորան մեր ծառայ ընդունեմ, բայց ուղիղն ասած, մեծ արժողութիւն չունեցայ նորա քաջութեան վերայ, հիմայ դու լաւ ժամանակ եկար, դու կտրիճ և ուժով մարդ ես երևում, ուստի մտածեցի նորա գլխին մի խաղ բերել, որ իւր անպիտանութիւնը խայտառակուի և դու նախամեծար լինես:

ԿՈՍՏՐԱՏԻՈՍ

Աքանչելի մտածմունք, շուտ արէք սկսեցէք, այսպիսի գործերու մէջ մէկ հատիկն եմ, ինչ պէտք է անել ասացէք, դարձեալ կրկնում եմ ձեզ, որ ամեն բան կարող եմ, և երդվում եմ Գողեաթի մօրուքով, և պապիս պեխերով, որ բոլոր դժողքը ոչինչ չարժէ դիմացս, պոչերը կը կտրատեմ սատանաներու, կտոր կտոր կանեմ սաթայելի եղջիւրը, ու լեղապատառ կը հալածեմ բոլորին ծակից ծակ:

ՀԱՆՐԱՅԻՆ ... Публичная библ... 7 / VI. 1922

ՌՈՄՈՒԼՈՍ

Տեսնենք, ուրեմն տեսնենք, անունդ ինչ է:

ԿՈՏՐԱՏԻՈՍ

Թադէոս կոտրատիոս, և իրաւ կը կոտրեմ, կը կտրեմ, կը խորտակեմ, կը ճզեմ, կը բզեմ, դիմացս եկողին:

ՌՈՄՈՒԼՈՍ

Անունդ սոսկալի մի անուն է: Ո՞վ կայ այդտեղ, Թադոս:

## ՏԵՍԻԼ Ե

ՆՈՅՆՔ, ԹԱԴՈՍ

ԹԱԴՈՍ

Հըմմէ, տէր:

ՌՈՄՈՒԼՈՍ

Այս կտրիճ մարդուն տար ձախ կողմից պստիկ սրահը, թող այնտեղ դարսէ իւր զէնքը և զրեհը, հագցրու սորան սպիտակ լաթեր, կերակուր էլ տուր որ ուտէ, լաւ պահիր սորան և նայիր որ ոչ ոք չը նկատէ (Կոտրատիոսին:) Դու էլ կոտրատիոս այնտեղից չը դուրս գաս, մինչև որ քեզ չը կանչեմ:

ԿՈՏՐԱՏԻՈՍ

Գլխիս վրայ տէր:

ԹԱԴՈՍ (Կոտրատիոսին).

Երթանք: (դուրս են գնում:)

---



## ՏԵՍԻԼ Զ

ՌՈՄՈՒԼՈՍ, ՊԵՏՐՈՍ

ՌՈՄՈՒԼՈՍ (Մենակ:)

Ո՜հ, որչափ գոհ պէտք է լինեմ, որ համոզուի եղբայրս, թէ այս պարծենկոտ քաջերը որչափ վատ և անպիտան մարդիկ են:

ՊԵՏՐՈՍ (Դրսից:)

Կորէք գլխիցս անզգամ:

ՌՈՄՈՒԼՈՍ (դուռը նայելով:)

Ո՞վ է այդ գոռողը:

ՊԵՏՐՈՍ (Ներս գալով:)

Ինձ պէս մի մարդու, որ ամբողջ մի բանակից չի վախենում, ու աշխարհքը կը դողացնէ... (տեսնելով Ռոմուլոսին:) Ո՜հ ամենախոնարհ ծառայ եմ ձեր բարձր տէրութեանը:

ՌՈՄՈՒԼՈՍ

Բայց ինչպէս հասաք այստեղ:

ՊԵՏՐՈՍ

Մէկ անբան անասուն, տխմար ցնդածը ուզում էր ինձ սպասեցնել իմ գալս ձեզ իմաց անելու համար:

ՌՈՄՈՒԼՈՍ

Բայց կարծեմ որ պէտք էր...

ՊԵՏՐՈՍ

Հասկանում եմ, հասկանում եմ, գիտեմ ինչ էք ուզում ասել, ես էլ գիտեմ քաղաքավարութիւն, բայց ամեն

կանոն իւր զարտողութիւնը ունի, ու ինձ պէս մի մարդ ամեն տեղ համարձակ կարող է մտնել և դուրս գալ, ամեն դռները բաց կանէ, թէ որ կողպուեն կը խորտակէ, կը փշրէ բոլորը։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Սակայն այսպիսի մի տան մէջ։

ՊԵՏՐՈՍ

Այո, այո, մէկ տուն որ արժանի է ամենայն պատւոյ յարգանքի և մեծարանաց, և ես բուն իսկ սորա համար եկայ, իմ մեծարանքս յարգութիւնս, ակնամեծութիւնս մատուցանելու ձեր բազմահռչակ անձին և քաջափայլ անունը, և կեցցէն ամենայն հայկօղութիւնք որ դժողքը կը պութկան, կուզէին արգելել ինձ, ինձ Պետրոս ամենակուլոսի առանց վախենալու, որ իրաւ կուլ կը տամ ինձ դէմ կեցողներուն։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Բայց վերջապէս... (շփոթուելով։)

ՊԵՏՐՈՍ

Բայց վերջապէս, ազնուափայլ տէր, ես այստեղ եկայ ամենայն համարձակութեամբ։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ես էլ ուզում էի ճիշտ գիտենալ համարձակութիւնդ։

ՊԵՏՐՈՍ

Համարձակութիւն. սքանչելի խօսք, ահ համարձակութիւնը մեծ բան է, համարձակութեամբ ամենայն դըժուարութիւնների, և վտանգների կարելի է յաղթել, ահա ես էլ, օրօրինակ կարող եմ մենակ իմ համարձակութեամբս ցիրուցան անել ու կծիկ դնել բոլորին։



ՌՕՄՈՒԼՏՈՍ

Բայց գիտես որ կամաց կամաց համբերութիւնս կը հատեցնես։

ՊԵՏՐՈՍ

Այո, մեծապատիւ տէր, համբերութիւնը... բայց գիտէք որ համբերութեամբ մեծամեծ գործեր գլուխ կը գան, համբերութիւն ասիր միտս եկաւ, մի օր...

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ո՛հ այլ ևս չեմ կարող դիմանալ, պէտք է ասես այստեղ գալուդ պատճառը թէ ոչ։

ՊԵՏՐՈՍ

Ի՞նչ, դեռ չիմացաք որ ես այստեղ եկել եմ Կերարտոսի յաջորդ լինելու համար. թէ որ նա տասը հոգի կը ճանէր գրպանից ես հարիւր հոգի կը հանեմ։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ի՞նչ ասիր անունդ։

ՊԵՏՐՈՍ

Պետրոս ամենակուլոս։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Բայց որո՞նք են արժէքներդ որ կարողանամ...

ՊԵՏՐՈՍ

Իմ արժէքներս, սքանչելի խօսք, քաջութիւն անյաղթելի, ոյժ, սարսափը որ մենակ իմ անունս է, է՜հ, ինձ ձեր տան մէջ ընդունեցէք, լաւ թօշակ կապեցէք, ու նորանից յետոյ ամեն բան հրամայեցէք ինձ, կը տեսնէք։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ութեմն քո քաջութիւնդ կարող է ինձ շահաւոր լինել. դու ինձ ասա մեռելներից կը վախենա՞ս:

ՊԵՏՐՈՍ

Մեռելներից, հա՛, հա՛, հա՛, մեռելներից, շնորհակալ եմ ձեր արած կասակի վերայ, ո՛չ մեռելներից, ոչ կենդանիներից, գիտէ՞ք որ, հարիւր սատանայ ունեմ փորիս մէջ իմ հրամանիս տակ:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ուրախ եմ այդ առատութեան վերայ, սատանայ ասիր միտս եկաւ, կարո՞ղ ես ղորդ մի սատանայ ձեւանալ:

ՊԵՏՐՈՍ

Ի՞նչ խօսք կայ, ամենայն յօժարութեամբ, դորանից հեշտ բան կա՞յ, ահա պատրաստ եմ, արդեօք մի կատակերգութիւն կուզէք խաղացնել:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Այո՛, կատակերգութիւն կամ նորա նման մի խաղ: Այս իրիկուն մէկը եկաւ ուզելով Կերարտոսի տեղը անցնել ու նորա դագաղի մօտ պէտք է պահպանութիւն անէ, այս գիշեր դու սատանայի հագուստով պէտք է երեւաս նորան, երբ որ կասեմ, այս չափս բաւական է քեզ, ո՞վ կայ այդտեղ Թադոս: (Ներս է մտնում Թադոս:)

ԹԱԴՈՍ

Հա՛մմէ:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Տար այս կտրիճ մարդուն վերի սենեակներից մէկում, և դու շուտով յետ դարձիր: (Գնում են:)



ՌՕՄՈՒԼՏՈՍ (Մենակ:)

Ի՞նչ զուարճալի մի խաղ պէտք է լինի, որքան պէտք է ծիծաղեմ այդ յիմար պարծենկոտների վերայ: (Ներս է մտնում Թադոս:) Հիմայ գնայ սրահը, բայց նայիր որ ոչ ոք չը տեսնէ քեզ, ու այստեղ բեր ճերմակներ հագած մարդուն, շո՛ւտ արա:

ԹԱԴՈՍ

Էս սհաթիս աղա: (Գնում է և մի քիչ երկայն նստարան բերում: Կամ պէտք է առաջուց լինի բեմի վերայ:)

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Այս սեղանը բաւականին մեծ է և կարող է դագաղի տեղ գործածուել, մեռելը կարող է շատ լաւ վրէն պառկել, մի սև օթոց պէտք է, այն էլ մէկ տեղից կը գտնենք, սատանայի լաթերն էլ բարեկենդանի զգեստներից կը գտնեմ: (Թադոսը ներս է բերում աղքատ հագնուած Կոտրատիոսին.) Ահա՛ մեռելը:

ԿՈՏՐԱՏԻՈՍ

Ահա՛ եկայ ես, պատրաստ եմ ձեր ամեն հրամանները կատարելու, բայց որչափ աւելի կախորժէի թէ որ ձեռքերուս ոյժը մէկ փորձէիք:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Լուռ կաց, ձայն մի հանիր, դու Թադոս գնայ մի քիչ ջուր և ալիւր բեր: (Ծառան գնում է:)

ԿՈՏՐԱՏԻՈՍ

Ալիւր և ջո՞ւր, ի՞նչ էք ուզում անել:

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Հիմայ կը տեսնես: (Ներս է մտնում Թադոս ալիւրը և ջուրը ձեռքին:)

ԹԱԴՈՍ

Անձ ուզածդ տէր։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Թրջէ սորա երեսը։

ԹԱԴՈՍ

Գլխիս վերայ։ (Թրջում է երեսը։)

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Քսիր ալիւրը երեսին։

ԿՈՏՐԱՏԻՈՍ

Ուզածիդ պէս լինի։

ԹԱԴՈՍ

Տեսէք ինչ լաւ մեռել եղաւ։

ԿՈՏՐԱՏԻՈՍ

Ով գիտէ ինչ փառաւոր կերպարանք ունեմ։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Լռիր, լռիր, պառկիր այս սեղանի վերայ ու շունչ չառնես ամենևին, երևակայիր թէ մեռած ես, Թադոս մի սև օղոց բեր։

ԹԱԴՈՍ

Այս րոպէիս։ (Դուրս է գնում։)

ԿՈՏՐԱՏԻՈՍ

(Պառկելով։) Անձ սեղանի վերայ կը պառկեմ, ա՜հ, այս ինչ կարծր անկողին է. բայց միշտ այսպէս մեռած պիտի մնամ։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Հիմայ քո պահապանը կը գայ։



ԿՈՏՐԱՏԻՈՍ

Մօտը զէնք չը պէտք է ունենայ այնպէս չէ՞։

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Այո՛, իմ քաջասիրտ, մի վախենար, մի դողար, առանց զէնքի պիտի գայ, դու մի քիչ ժամանակ անշարժ եղիր, ու երբ պահապանդ աչքերը յոգնած քնել ուզենայ, քո հնարագէտ հանճարոյդ կը թողնեմ, յարութիւն առնելդ ու սարսափեցնել նորան, թէ որ կարող ես, նորան դող գցել ու փախցնել, որ դու ընտրուես մեզ մօտ, և բացի դրանից մեծ պարգև կը ստանաս ինձանից։

ԿՈՏՐԱՏԻՈՍ

Հասկացայ, անելիքս գիտեմ, մի հոգար։ (Ներս է մտնում Թադոսը։)

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ծածկէ դորա վերայ, (Թադոսը ծածկում է։) այդպէս, լաւ, ոչ... գլուխը պէտք է ազատ լինի, որ շունչ առնէ և անելիքը գիտենայ, Թադոս երթանք, մեռել զգոյշ կաց. բարի գիշեր։ (Դուրս են գնում։)

ԿՈՏՐԱՏԻՈՍ

(Մենակ մի քիչ գլուխը բարձրացնելով։) Քանի տեսակ խենթեր կայ երկրիս վերայ, ինչ փառաւոր գործ է մեռել ձևանալը... (Լսվում է դրսից ոտի ձայն։) Բայց ոտի ձայն է, պահապանս գալիս է, խորհրդածութեան ժամանակ չէ ես դարձեալ մեռնեմ։ (Ներս է բերում Թադոսը Շանախորովին որ ծածկած ունի մէկ շիշ գինով, և մէկ բաժակ գինու։)

ԹԱԴՈՍ

Անձ մեռելը, կատուներից և մկներից լաւ պահպանես դորան, արթուն կաց, և նայիր որ չը քնես, թէ չէ այնպէս կը վախենաս, որ արիւնդ կը սառի։

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Չա՛, հա՛, հա՛, ես վախենա՛մ մի մեռելից, տօ գնայ բանիդ, սատանան ինքը անձամբ գայ ինձ տանելու դարձեալ չեմ վախենայ:

ԹԱԴՈՍ

Է լա՛ւ, բարի գիշեր: (Դուրս է գնում:)

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Երթաս բարով: Ուստի ազնուամեծար մեռել, (Մօտենում է թախտին և վախից յետ է փախչում:) Ո՛հ, ո՛հ, ի՛նչ գարշելի կերպարանք ունեն մեռելները, մանաւանդ սա որ շատ տգեղ է, կարծես ցեխից դուրս եկած խոզ լինի, ի՜նչ աւազակի դէմք ունի, դորան կենդանութեան ժամանակ լաւ մարդ էինք կարծում որ չէինք ճանաչում, ծանօթներից մէկի նման է, բայց չեմ յիշում ումը, աւելի լաւ է որ երեսին չը նայեմ: Ուստի սիրելի հանգուցեալ լաւ ընկերութիւն պէտք է անենք միասին, և քեզ պատիւ տալու համար... (Հանելով ծոցից շիշը:) Այս բաժակովս պիտի խմեմ քո քաջութեան համար, որ միւս աշխարհը գնացիր: (Քիչ խմում է, և բաժակը դնում պահարանի կողքին:) Մեռնելուց յետոյ ինչ գէշ կերպարանք են ստանում ամենաքաջերն էլ: Որչափ երկար պիտի երևայ ինձ այս գիշերը, ի՜նչ անեմ ձանձրութիւնից փախչելու համար, է՛հ, ինքս ինձ խէնթի պէս կը խօսեմ. դեռ տեսնեմ սրահի դռները հօ բաց չեն: (Դուրս է գնում: Կոտրատիոսը մէջ է մտնում բաժակը վերցնում է և տեղը դնում, դարձեալ պահւում է, ներս է մտնում Շանախորովը:) Դռները լաւ փակ են, ա՛հ, կամաց կամաց ոտներուս մէջ դող է մտնում, ո՞վ կը մտածէր թէ այս գիշեր մի մեռելի հետ մենակ կը թողնեն ինձ: Յիշում եմ որ իմ մեծ մամս, երբ տղայ էի կը պատմէր, որ ուրուականները, մեռելները յարութիւն են առնում, ու գիշերները ման են



գալի, է՛հ ամենն էլ սուտ առասպելներ են, բայց քիչ էլ իրաւ կայ մէջը: Իմ մամս լաւ գիտէր, ու մեր գեղի վարժապետն էլ որի անունը լիափորիկ էր, որ անցեալ տարի մի մեռել... է՛հ, բայց ինչո՞ւ եմ մեռելների վրայ մտածում, մինթէ սա է ձանձրութեան յաղթելու կերպը, զուարթութիւն, բայց մինչև վերջը ոտքի վերայ պէտք է մնա՛մ, ահա մի աթոռ: (Նստում է թախտի վերայ:) Հիմայ այսպէս լաւ է, այսպէս շատ հանգիստ է, չեմ ուզում որ քնից յաղթուեմ, է՛հ, որքան կարելի է կաշխատեմ որ չը քնեմ, մի կաթիլ էլ տնկեմ, ի՜նչ սքանչելի ընկեր է այս գինին: (Վերցնում է բաժակը:) Այս ի՜նչ է մէջը ցամաքել է, բան չը կայ, արդեօք մեռելը խմեց, չէ՛, չէ՛, կարելի է ես եմ խմել բոլորը առաջուց և մոռացել եմ: (Ածում է գինին մի քանի անգամ խմում, և դատարկ բաժակը գինով լցնում է:)

Գինի գինի, կուտաս հոգի,
Բիւր անգամ կը խմեմ գինի,
Կը զուարճանամ,
Քու գինով կըլլամ,
Տրալալա լալամ: (3 անգամ:)

(Հորանջում է:) Ի՞նչ անեմ երբ քունը գալիս է, մարդ չի կարողանում դիմանալ... հոգ չէ... դռները լաւ փակ են, ես կը քնեմ, բնութիւնը իր հանգիստը կը պահանջէ: (Քնում է թախտի վերայ նստած խռմփալով:)

ԿՈՏՐԱՏԻՈՍ

(Գլուխը բարձրացնելով:) Քնեցաւ, հիմայ ժամանակ է սորա գլուխը մի խաղ խաղալ... (Թմբրած:) Բայց ազնիւ գինին ինձ էլ հաշտեցրեց քնի հետ... է՛հ, քիչ ես էլ կը քնեմ, գիշերը երկար է, բայց այս ինչ կարծր անկո-

ղին են տուել խեղճ մեռելին, յոգնեցայ կռան վերայ պառկելուց, կողքիս վերայ դառնամ։ (Ձեռքը գտնում ծածկոցի բռնակը վեր է ընկնում։)

ՇԱՆԱԽՈՐՈՎ (Վեր է թռչում տեղից և գոռալով վազվզում է։)

Վա՜յ ինձ օգնութիւն։ (Ուշքի գալով։) Ա՜հ, լաւ է, (հոգոցելով.) որ զարթեցայ, երազիս մէջ տեսայ, որ սատանէն եկել էր և մեռելը տանում էր իր տուն, և ինձ էլ հետն էր ուզում տանի։ Էհ, միշտ առաջին քնի մէջ կը գան սարսափելի երազներ։ (Թմրած։) Հիմայ կը յուսամ աւելի հանգիստ քնել։ (Կատաղութեամբ շարժվում է, Շանախորովը տեղից շտապով գոռալով վազվզում է։) Այս ինչ է վերջապէս, այս մեռելը մի փորձանք պէտք է բերէ գլուխս. էլ չեմ կարող մենակ մնալ այստեղ, դողում եմ, արիւնս սառեցաւ, գնամ օգնութիւն կանչեմ։ (Դուրս նայելով։) Մէկին տեսնում եմ այստեղ։ Խոհարար պառաւն է մօտենում այստեղ։ (Կանչում է։) Եկո՛ւր, եկո՛ւր։ (Դուրս է գնում, պառաւի յետեւից բռնած ձեռն է բերում, պառաւը դողդողում է։)

ՊԱՌԱՒ (Մեռելին չը տեսնելով։)

Թող ինձ ո՞վ ես դուն, խոհանոցում քունս տարել էր, այնտեղ մնացել էի, թող որ գնամ անկողինս պառկեմ։

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Քիչ էլ դուն զարթուն կաց և պահպանութիւն արա։

ՊԱՌԱՒ

Ո՞ւմ պէտք է պահպանութիւն անեմ։

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Տես։ (Ցոյց տալով մեռելի վերայ։) Այ սորան։

ՊԱՌԱՒ

Մեռե՜լ... մեռե՜լ... (Սարսափած դողդողալով։) Ով Աս-



տուած, մեռել, դու ես սպանել նորան, դու գող ես, դու աւազակ ես, ինձ էլ պէտք է սպանես, մորթես, կտոր կտոր անես, ա՜հ օգնութիւն, գթութիւն, կրակ, գող կայ։ (Ուզում է փախչել Շանախորովը չէ թողնում։) Ա՜հ, ա՜հ, արիւնս պէտք է խմես։

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Ի՞նչ արիւն ունիս որ խմեմ, լո՛ւռ կաց ցնդած պառաւ, մտիկ արա, տես ինչ պէտք է ասեմ։

ՊԱՌԱՒ

Ահ, ողորմէ ինձ, դեռ մեռնելուս ժամանակ չէ, խնայիր իմ պառաւ քաղցր կեանքը, թող տուր որ նախ աղօթեմ, խնայէ իմ կեանքը, ա՜հ, ա՜հ, ահա մարեցայ, շունչս չը մնաց վրես, մեռայ։

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Լուռ կաց ասի քեզ, ես քեզանից օգնութիւն կուզէի, իսկ դու երկրորդ ցաւը եղար գլխիս, անզգամ պառաւ, հիմայ սատանան կը գայ քեզ կը յափշտակէ։

## ՏԵՍԻԼ Է

ՆՈՅՆՔ, ՊԵՏՐՈՍ

ՊԵՏՐՈՍ (Իսկոյն յայտնվում է սատանի կերպարանքով և հագուստով, ձեռքում վառած մոմ, միւսում շղթաներ։)

Սատանան կուգայ այստեղ քեզ համար թշուառական։

ՊԱՌԱՒ (Զարհուրած։)

Գթութիւն հասէք, օգնութիւն։

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Ա՛հ կաղաչեմ, տէր սատանայ ների՛, ողորմէ՛, ա՜հ, ա՜հ, այս ինչ կրակ է այրվում է, բորբոքվում է սիրտս: (Գետինը ճանկռոտելով:)

ԿՈՏՐԱՏԻՈՍ (Այս պահունի ժամանակ Թադէոսը սատանին որ թեւնաւոր է, ձեռը ընկած վազում է մեծ ճոպը գոտուցով:)

Ահ, սատանէն եկել է:

ՊԵՏՐՈՍ (Վախենում է երբ տեսնում է Թադէի վերջինացը:)

Ահ մեռելը չարութիւն առաւ: (Վայր է գցում չեռախից շշեան և մոմը, և ամենը վազում են միմեանց ցեռևից խրանդ մեջ շրջան բռնելով, ցեղաց շփոթում են նոյն տխուրեամբ և երար երեսին նայում, այդ ժամանակ պատուրը ահռելի տաջն է ընկում:)

ՊԵՏՐՈՍ

Ողորմէ ինձ սիրելի մեռել:

ՇԱՆԱԽՈՐՈՎ

Ա՛հ, տէր սատանայ...

ՊԱՌԱՒ

Ահ, գթայ մեռել, բարեսիրտ սատանայ:

## ՏԵՍԻԼ Ը

ՆՈՅՆՔ, ՌՕՄՈՒԼՏՈՍ, ԼՕՐԷՏՈՍ, ԾԱՌԱՆ.

(Վառած մոմը չեռուին կանգնում են դռան մօտ, և նայում:)

ՊԵՏՐՈՍ

Դուն ճանախորո՛վն ես...

ԿՈՏՐԱՏԻՈՍ

Դու ամենակուլի՛ն ես:



ՇԱՆԱԽՈՐՈՎ

Դու կոտրատի՛ոսն ես... (Երբ հարցնում են, երար հաւանելով նշան են տալիս: Տէրերը և ծառան բոլորովին ծիծաղում են:)

ՌՕՄՈՒԼՏՈՍ

Ա՛հ, դուք վատասիրտ մարդիկ երեքդ էլ, տես եղբայր իմ, տեսէք դուք էլ սիրելի հանդիսականք, ինչ կարժեն սուտ պարծենկոտները: (Ծիծաղում են, ձեռները երար երեսին նայելով թռում են շշկլած. իսկ Ռօմուլտոսը, Լօրէտոսը և ծառան երգում են:)

Ով տէր Աստուած ինչ կը տեսնենք,
Խսպէս դիպուած, ծառաները
Խայտառակուած: (2 անգամ:)

(Երգելու ժամանակ վարագոյրը կամաց կամաց իջնում է:)

## ՎԵՐՋ

# ԱԶԳՔ ԵՒ ԱՆՈՒՆՔ ՅԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ։

ԹԻՖԼԻՍ. Ղազար Աւագ քահանայ Պալի-Գալֆայեան 2 օրինակ.,
Սարգիս քահ. Երիցեան 5 օր., Մարտիրոս քահ. Յարութիւնեան 1 օր.,
Գէորգ քահ. Բէգլիջանեան 1 օր., Սիմէօն քահ. Աբրահամեան 1 օր.,
Իշխան Բէհբութեան Կոստանդին 5 օր., Իշխ. Բէհբութեան Գէորգ 5 օր.,
Իշխ. Արղութեան Դաւիթ 5 օր., Իշխանուհի Վարվառայ Բէհբութեան
5 օր., Օր. Սօֆիա Քամալեան 5 օր., Տիկին Աննա Զաքարեան Հէջուբեան
1 օր., Տիկ. Աննա Պարոն-բէկեան Յարութիւնեան 1 օր., Տիկ. Մարեայ
Եւլէբէկեան 1 օր., Տիկ. Մարեամ Քամալեան 1 օր., Օր. Միրզեկեան 1
օր., Օր. Միրզեկեան. 1 օր., Պ. պ. Շարէբէգեան Նիկողայոս 1 օր., Իւզ-
բաշեան Յովհաննէս 3 օր., Մէլուրնութեան Դաւիթ 3 օր., Փիրոյեան
Աղէքսանդր 2 օր., Աւալեան Յովհաննէս 1 օր., Քամալեան Դաւիթ 1 օր.,
Քամալեան Սարգիս (ուսուցիչ) 1 օր., Մատինեան Գրիգոր (ուսուց.) 1 օր.,
Հէջուբեան Ռուբէն 1 օր., Դաւթեան Աղէքսանդր 1 օր., Պարոն-Բէկ-
եան Յովհաննէս 1 օր., Ղալամքարեան Գէորգ 3 օր., Ղալամքարեան
Սարգիս 1 օր., Անդրէասեան Սամսոն 1 օր., Տէր-Ղեւոնդեան Արշայ 1
օր., Ուրբելեան Արշակ 1 օր., Դարչինեան Մկրտիչ 1 օր., Քամոյեան
Ստեփաննոս 1 օր. Քամոյեան Մովսէս 1 օր., Սուղանաձեան Յովհաննէս
2 օր., Նալբանդեան Միքայէլ 1 օր., Բաղինեան Մնացական 1 օր., Ջա-
լինեան Սարգիս 1 օր., Դանդուրեան Նիկողայոս 1 օր., Արտաշէս Յակոբեան
1 օր., Շանշեան Յարութիւն 1 օր., Մկրտչեան Աստուածատուր 1 օր.,
Աքուլեան Աստուածատուր 3 օր., Բարսամեան Բարսեղ 1 օր., Սուն-
դուկեան Արշակ 1 օր., Ղալումեան Յակոբ 1 օր., Թոխաթելեան Բուղ-
դան 1 օր., Սարաջեան Յովհաննէս 1 օր., Մեհրաբեան Գէորգ 1 օր.,
Իշխանեան Կարապետ 1 օր., Արզումանեան Կարապետ 1 օր., Սուսանեան
Եղիայ 2 օր, Քափանակեան Գրիգոր 1 օր., Դօլուխանեան Մաղաքիայ 1
օր., Գիւլնազարեան Արտաշէս 1 օր., Ցուրինեան Սարգիս 1 օր., Բա-
քանեան Գէորգ 1 օր., Եարեան Արշակ և Բաղդասար 2 օր., Շամոյեան
Միքայէլ 5 օր., Ծիծիկեան Գէորգ 1 օր.—Տէր-Մանուէլեանց Հեգրան
1 օր., Իշխ. Բէհբութեան Լուկա 5 օր., Օր. Խոսրովադուխտ Յարու-
թիւնեան 1 օր., Տիկ. Սօֆիա Քամալեան 1 օր., տիկ. Գայիանէ Յակոբեան
1 օր., Տէր-Աւէտիսեան Կոստանդին 3 օր., Բարսեղեան Արշակ 1 օր.,
Քամալեան Յովհաննէս 1 օր., Աքուլեան Աստուածատուր 1 օր, Օր. Հռիփ-
սիմէ Ղարագեօզեան 1 օր., Տէր-Աւէտիսեան Դաւիթ 1 օր., Շահզուլեան
Բագրատ 1 օր., Ջարջիմանեան Գրիգոր 1 օր., Դոլլաթեան Զաքար
1 օր., Դոլլաթեան Աստուածատուր 1 օր.: ԷՋՄԻԱԾԻՆ.—Շահբազեան
Մանուկ 1 օր., Աղազատեան Պետրոս 1 օր., Պետրոսեան Արշակ 1 օր.,
Ադամեան Հմայակ 1 օր., Շահբազեան Օհանջան 1 օր., Արշակ Գնունի
1 օր.: ԱՇՏԱՐԱԿ.—Զալաբեան Յովհաննէս 1 օր.: ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ.—
Կարապետեան Դանիէլ 1 օր., Թոգմաձեան Երուանդ 1 օր., Թոգմաձեան
Վաղարշակ 1 օր., Սողոմոնեան Յարութիւն 1 օր.:

---

**ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.**

---

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

*Մեր մտադրութեան համաձայն խոստանում ենք մեր բաժանորդներին և ընթերցողներին, որ հետզհետէ լոյս կը տեսնուեն մեծ մասամբ, այն փոքրիկները որոնք մինչև օրս չեն տպագրուած։*

*Ցանկացողները կարող են դիմել մեզ հետևեալ հասցէով՝* Тифлисъ Малая Грязная ул., домъ № 17 Василію Камалянъ.

15901

2013